ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 24 >> փետրվար 2015թ. N 15

ք. Արմավիր

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թվականի մայիսի 6-ի ՆՀ- 728 հրամանագրի 1. 15-րդ կետի թ/ ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2015թվականի աշխատանքային ծրագիրը՝ մարզի տարածքում գործող <<Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության մասնաճյուղերի և ինքը ջրօգտագործողների ընկերությունների կողմից ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքը համակարգելու, ոռոգման ցանցերի մաքրման և վերանորոգման աշխատանքների կատարման ընթացքը և համակարգի արդյունավետ շահագործումը կարգավորելու նպատակով՝

Կարգադրում եմ.

Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

1. Հանձնաժողովին /Դ. Սամսոնյան/՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել <<Ջրառ>> փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնաշյուղերի մասնագետներին, ջրօգտագործողների ընկերությունների գործադիր տնօրեններին և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին / համաձայնությամբ/:
2. Հանձնաժողովին /Դ. Սամսոնյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներն իրականացնել 20-օրյա ժամկետում և արդյունքների վերաբերյալ պարբերաբար զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
3. Հանձնաժողովին /Դ. Սամսոնյան/ ստուգայցերի և ուսումնասիրությունների ժամանակ թերություններ և բացթողումներ հայտնաբերելու դեպքում հարցը քննարկել ջրօգտագործողների ընկերությունների վարչական խորհրդի նիստում, ձեռնարկել գործնական միջոցներ հարցի կարգավորման ուղղությամբ:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը /Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:
5. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2015 թվականի Փետրվարի 22-ի
N15 կարգադրության

ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝
Դ.Սամսոնյան — Հայաստանի հանրապետության Արմավիրի Մարզպետի տեղակալ

Անդամներ՝

Ա. Այվազյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

Մ. Սարիբեկյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ

Գ.Մելիքյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանությանվարչության բնապահպանության բաժնի պետ

Ս.Մխիթարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Պետրոսյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ

Վ.Միրզախանյան Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանությանվարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ

Կ.Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության
և բնապահպանությանվարչության
բնապահպանության բաժնի առաջատար
մասնագետ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Փ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ